Քրիստոսի Լույսը

Տվեք Քրիստոսի Լույսի սահմանումը

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 88.12–13 հատվածները՝ փնտրելով Քրիստոսի Լույսի նկարագրություններից մեկը:

Կարդացեք Քրիստոսի լույսի հետևյալ սահմանումը.

«[Քրիստոսի Լույսը] աստվածային էներգիան է, այն զորությունը կամ ազդեցությունը, որը բխում է Աստծուց՝ Քրիստոսի միջոցով, և կյանք ու լույս է տալիս ամեն ինչին: Դա այն օրենքն է, որով բոլոր բաները կառավարվում են երկնքում և երկրի վրա (Վ&Ու 88.6–13): Այն նաև օգնում է մարդկանց հասկանալ ավետարանի ճշմարտությունները և կանգնել ավետարանի ճանապարհի վրա, որը տանում է դեպի փրկություն» (Սուրբ գրքերի ուղեցույց, «Լույս, Քրիստոսի Լույսը», scriptures.ChurchofJesusChrist.org)

- Ինչպե՞ս կամփոփեք, թե ինչ հասկացաք՝ ինչ է Քրիստոսի Լույսը:
- Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս է անձամբ ձեզ վրա ազդում Քրիստոսի Լույսը:

Քրիստոսի Լույսը՝ որպես մեր խիղճը

Քրիստոսի Լույսի դրսևորումներից մեկը մեր խիղճն է: Գրեք մի այնպիսի սահմանում, որ Երեխաների միության երեխան հասկանա, թե ինչպես եք դուք պատկերացնում, թե ինչ է խիղճը:

Կարդացեք հետևյալ սահմանումը և տեսեք, թե ինչ կարող եք ավելացնել ձեր սահմանմանը.

«[Խիղճը] ճշտի և սխալի ներքին զգացումն է. այն գալիս է Քրիստոսի Լույսից, որը բոլոր մարդկանց մեջ է (Մորոնի 7.16): Մենք ծնվել ենք ճիշտն ու սխալը տարբերելու բնական ունակությամբ՝ Քրիստոսի Լույսի շնորհիվ, որը տրված է յուրաքանչյուր մարդու (Վ&Ու 84.46): Այդ ունակությունը կոչվում է խիղճ: Դրանով օժտված լինելը մեզ դարձնում է պատասխանատու էակներ: Ինչպես մյուս ունակությունները, մեր խիղճը կարող է մեռել մեղքի կամ սխալ օգտագործելու պատճառով»: (Սուրբ գրքերի ուղեցույց, «Խիղճ», scriptures.ChurchofJesusChrist.org)

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 84.45–46 և Մորոնի 7.16 հատվածները՝ փնտրելով բառեր կամ արտահայտություններ, որոնք նկարագրում են, թե ինչպես է Քրիստոսի Լույսը գործում որպես մեր խիղճը: Կարող եք այս երկու հատվածների համար խաչաձև հղում ստեղծել:

- Այս հատվածներից ո՞ր արտահայտությունն է օգնում է ձեզ հասկանալ, թե ինչ է խիղճը:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը ձեզ խիղճ տվել:

Ձեր խիղճի ձայնին լսելը կամ այն անտեսելը ինչպե՞ս կարող է ազդել ձեր կատարած ընտրությունների և ձեր հավերժական նպատակակետի վրա:

Քրիստոսի Լույսը յուրաքանչյուրի մեջ է

Պատկերացրեք, որ ձեզ խնդրում են կիրակնօրյա դպրոցում կիսվել մի հակիրճ մտքով, թե ինչպես կարելի է ավելի լավ վերաբերվել բոլոր մարդկանց, հատկապես նրանց, ովքեր տարբերվում են ձեզանից: Դուք կարող եք օգտվել հետևյալ նյութերից և ցանկացած այլ աղբյուրներից, որոնք ձեզ օգտակար են թվում:

Վարդապետություն և Ուխտեր 88.11

Վարդապետություն և Ուխտեր 93.2

Տասներկու Առաքյալների Քվորումի նախագահ Բոյդ Ք. Փաքերը (1924–2015) ուսուցանել է.

Որքան շատ իմանանք Քրիստոսի Լույսի մասին, այնքան ավելի շատ կհասկանանք կյանքի մասին և այնքան ավելի խոր սեր կունենանք ողջ մարդկության հանդեպ: Մենք կլինենք ավելի լավ ուսուցիչներ, միսիոներներ և ծնողներ և ավելի լավ տղամարդիկ, կանայք և երեխաներ: Մենք ավելի խոր հարգանք կունենանք Եկեղեցու մեր եղբայրների և քույրերի հանդեպ և նրանց հանդեպ, ովքեր չեն հավատում: . . .

Քրիստոսի Լույսը համընդհանուր է՝ ինչպես արևի լույսը: Որտեղ որ կա մարդկային կյանք, այնտեղ կա Քրիստոսի Լույսը: Ամեն մի կենդանի հոգի օժտված է դրանով: . . .

Եթե մենք հասկանանք, որ Քրիստոսի Լույսն իսկապես բոլորի մեջ է, ում մենք տեսնում ենք. . . և մեր ներսում է, . . . մենք կունենանք այնպիսի քաջություն և ոգեշնչում, որ կգերազանցեն այն, ինչ մենք մինչ այժմ գիտեինք: Եվ դա *պետք է* այդպես լինի: Եվ դա *կլինի* այդպես: Այս ամենը ավետարանի ճշմարտության մի տարր է, որը քչերն են միայն հասկանում: (Բոյդ Ք. Փաքեր «Քրիստոսի լույսը», Ensign ապրիլ 2005 թ., 8, 13–14)

Երկու-երեք նախադասությամբ գրեք, թե ինչպես կարող է Քրիստոսի Լույսի վերաբերյալ հասկացողությունը ազդել այն բանի վրա, թե ինչպես եք դուք վերաբերվում մարդկանց:

Քրիստոսի Լույսը տիեզերքում

Ձեզ երբևէ հուզե՞լ է այս երկրի և տիեզերքի գեղեցկությունը կամ վեհությունը: Ի՞նչ զգացումներ են առաջացնում այս բաները ձեր մեջ:

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 88.7–10, 45–47 հատվածները և փնտրեք, թե ինչ եք սովորում Քրիստոսի Լույսի, երկրի և տիեզերքի մասին:

- Ի՞նչ կարող ենք սովորել Տիրոջ մասին՝ Նրա արարածներից:
- Տիեզերքում Աստծո ազդեցությունը հասկանալն ինչպե՞ս կարող է օգնել մեզ հասկանալ Նրա ազդեցությունը մեր կյանքում:

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_321-1